ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/107

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ
Մասնակից՝ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի ներկայացուցիչներ՝ Ա. Մկրտչյանի, Մ. Մկրտչյանի,
«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ն. Մուրադյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, այգիների պահպանման ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/3»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.04.2021թ.-ի թիվ 26/26-1/6050-2021 գրությամբ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 15.04.2021թ.-ի թիվ 19/2021 գրության հիման վրա, 21.04.2021թ.-ին «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 21.04.2021թ.-ին:

22.04.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/107 համարի ծածկագիրը:

30.04.2021թ.-ին, 06.05.2021թ.-ին և 21.05.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 06.05.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 21.05.2021թ.-ին:

2. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը 15.04.2021թ. թիվ 19/2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2021 թվականի մարտի 15-ին կնքված Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կարիքների համար այգիների պահպանման

ծառայությունների մատուցման թիվ ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/3 պետական գնման պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջները՝ Պատվիրատուն՝

1. Միակողմանի ամբողջությամբ լուծել է «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի հետ 15.30.2021թ. կնքված այգիների պահպանման ծառայությունների մատուցման թիվ ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/3 պետական գնման պայմանագիրը.

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 13.04.2021թ. միաժամանակ ուղարկվել է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurement.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավորության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը՝ դիմում ենք Ձեզ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ գործընթաց նախաձեռնելու նպատակով համաձայն «Գնումենրի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.04.2021թ.-ին գրությամբ դիմել է «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.04.2021թ.-ի թիվ 26/26-1/6050-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 05.05.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն ոչ միայն առարկում է, այլ շարունակում է պնդել, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը դիտավորյալ միտում է ունեցել միակողմանի խզել պայմանագիրը և այդ պատճառով կայացրել է խտրական և ոչ ողջամիտ մի շարք որոշումներ:

Մեր ուղարկած մի շարք առարկությունների մեջ համառոտ նկարագրել ենք այն հիմքերն ու փաստերը, որոնց հիման վրա եկել ենք նման եզրակացության /կցվում են նամակին/:

2021 թվականի մարտի 15-ին Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի և <<Ալեքսանդր-Մ>> ՍՊԸ-ի միջև կնքվել է Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կարիքների համար թիվ ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/3 պետական գնման պայմանագիրը: <<Ալեքսանդր- Մ>> ՍՊԸ-ն մարտի 16-ից սկսում է ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/3 պայմանագրում նշված աշխատանքները: Այստեղ տեխնիկական բնութագրով աշխատանքների սկիզբը նշված էր մարտի առաջին տասնօրյակը, սակայն <<Ալեքսանդր-Մ>> ՍՊԸ-ն սկսել է աշխատանքները մարտի 16-ից՝ իրենից անկախ հանգամանքների պատճառով /մրցույթը ուշ է հայտարարվել և պայմանագիրը ուշ է կնքվել/: Տեխնիկական բնութագրում նշված էտման աշխատանքները որոշվում է հետաձգել մարտի 29-ին, քանի որ հիդրոմետ ծառայությունից զգուշացում էր ստացվել, որ մարտի 28-29 Արարատյան դաշտում սպասվում է ցրտահարություն, որը կարող էր վնասել խաղողի վազերը: Այս որոշումը նույնպես համաձայնեցված է եղել պատասխանատու Արամայիս Մկրտչյանի հետ: Մարտի 29-ից <<Ալեքսանդր-Մ>> ՍՊԸ-ն սկսում է էտման աշխատանքները: Մարտի 30-ին ներկայացվում է հանձնման-ընդունման արձանագրությունը, որտեղ նշվում է միայն կատարված աշխատանքները, այդ թվում էտման աշխատանքի դիմաց նշվում է, որ այն կատարված է մասնակի: Հարկ եմ համարում նշել, որ հանձնման-ընդունման արձանագրության համար Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամն ի սկզբանե ուղարկել էր դրական եզրակացություն և կնիքված հանձնման-ընդունման արձանագրություն, սակայն ապրիլի 2-ից հետո, երբ <<Ալեքսանդր-Մ>> ՍՊԸ-ի տնօրենը հանդիպում է հիմնադրամի տնօրեն Զառա Մուրադյանին և այն բանից հետո, երբ <<Ալեքսանդր-Մ>> ՍՊԸ-ի տնօրենը տեղեկացնում է այն մասին, որ իրեն հայտնի է, որ այսքան ժամանակ կազմակերպությանը վերահսկում էր մրցակից կազմակերպության ներկայացուցիչը, և որ այդ արարքը անօրինական է, դրական եզրակացությունը մեկ օրում փոխվում է բացասականի: Մեզ հաջողվել է պահպանել ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/3 պայմանագրի դրական եզրակացությունը և կնիքված հանձնման-ընդունման արձանագրությունը, որը

նույնպես կցվում է գործերին: Այս խոսակցությունն ենք համարում խտրական և կամայական որոշումների պատճառը:

Նոր՝ բացասական եզրակացությունում շտկումների ժամկետը սահմանվում է 2 օրացուցային օրը, որը համարում ենք ոչ ողջամիտ և որի վերաբերյալ նույնպես տեղեկացնում ենք դիմում-առարկությունում: Սակայն ապրիլի 12-ին Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/3 պայմանագիրը միակողմանի խզելու որոշում է ծանուցում:

Այս պատճառով <<Ալեքսանդր-Մ>> ՍՊԸ-ի դեմ ներկայացրած հայտը գնումներին մասնակցելու իրավունք չունեցող ցուցակում ներառելու վերաբերյալ համարում եմ անհիմն: Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը շարունակում է իր դիտավորյալ խտրական միտումները Ալեքսանդր-Մ ՍՊԸ-ի նկատմամբ: Եվ այդ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամն է, որ պետք է պատասխանատվություն կրի պաշտոնեական դիրքի չարաշահման, խտրական ու ոչ ողջամիտ որոշումների, արհեստական խոչընդոտներ ստեղծելու համար:»:

4. <u>ՍՑ-LO-2021/107 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 15.03.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամին ի պահ տրված՝ Վաղարշապատ քաղաքում գտնվող, 1,4 հա մակերես զբաղեցնող խաղողի կոլլեկցիոն (2550 վազ) և 1 հա ցուցադրական (2000 վազ) այգիների, ինչպես նաև 1,8 հա ֆիլոքսերադիմացկուն սորտ պատվաստակալների մայրուտ այգու տարեկան գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման նպատակով Կատարողը պետք է իրականացնի ստորև նշված աշխատանքներն ըստ օրացուցային գրաֆիկի:

Մասնավորապես, կոլլեկցիոն և ցուցադրական այգիներում պետք է իրականացվեն.

2021թ. մարտ ամսվա առաջին տասնօրյակում նշված տնկարկներում առկա խաղողի վազերի էտ՝ ազատ-հովհարային ձևավորմամբ: Կոլեկցիոն այգու հատվածում էտն իրականացնել տարբեր սորտերի առանձնահատկություններից ելնելով: Էտի աշխատանքների ավարտից հետո հեռացնել արքատները տնկարկից: Հաջորդիվ իրականացնել շարքերի լարերի տեղադրման և ձգման աշխատանքներ: Նշված աշխատանքներին զուգահեռ իրականացնել տվյալ հատվածում առկա բոլոր երկաթբետոնյա հենասյուների վիճակի մոնիտորինգ, որից հետո դրանց ամրացում, վնասված և ջարդված հենասյուների փոխարինում նորերով:

Այնուհետև իրականացնել վազերի չոր կապի աշխատանքներ:

1 հա ցուցադրական այգում իրականացնել կարկտապաշտպան ցանցի տեղադրման և ամրացման աշխատանքներ /ցանցը տրամադրվում է Պատվիրատուի կողմից/:

Շվատում և կանաչ կապի աշխատանքներ. մայիս-օգոստոս ամիսներին ըստ վազի պահանջի իրականացնել վազերի շվատում՝ ժամանակահատվածի ընթացքում նվազագույնը 3 անգամ: Բացի այդ զուգահեռ իրականացնել կանաչ կապի աշխատանքներ:

Շվերի ծերատում. իրականացնել 4-րդ լարից անցած շվերի ծերատում /ըստ վազի աճի/ հուլիս-օգոստոս ամիսներին՝ նվազագույնը 3 անգամ:

Վազերի հիվանդությունների հարուցիչների և վնասատու օրգանիզմների դեմ պայքարի միջոցառումներ. Իրականացնել մեքենայացված և/կամ ձեռքով պայքար սնկային հիվանդությունների և վնասատու օրգանիզմների դեմ. օիդիումի, միլդիուի դեմ մայիսի առաջին տասնօրյակ: Մայիսի վերջին տասնօրյակ՝ օիդիումի, միլդիուի և ողկուզակերի դեմ: Հունիսի երկրորդ տասնօրյակ՝ օիդիումի, միլդիուի դեմ: Հուլիսի առաջին տասնօրյակ՝ օիդիումի, միլդիուի և ողկուզակերի դեմ: Կախված եղանակային պայմաններից, անհրաժեշտության դեպքում օիդիումի, միլդիուի դեմ հուլիսի վերջին տասնօրյակ: Օգոստոսի երկրորդ տասնօրյակ մոխրագույն փտման, օիդիումի և ողկուզակերի դեմ: Հաշվի առնելով նշված հիվանդությունների և վնասատուների զարգացման տարբեր փուլերը և եղանակային պայմաններից կախված լինելը ներկայացված պայքարի միջոցառումների հաճախականությունը և ժամանակացույցը կարող են փոխվել: Մայիս-օգոստոս ժամանակահատվածում իրականացնել նվազագույնը 7 բուժում: Թունանյութերը ձեռք են բերվում Կատարողի կողմից՝ նախօրոք տեսակները համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:

Վազերի աճից կախված իրականացնել նաև պարարտացման և/կամ տերևային սնուցման աշխատանքներ՝ կիրառելով անհրաժեշտ պարարտանյութեր:

Բերքահավաք և տեղափոխում. Կատարել բերքահավաք 15-20կգ տարողությամբ արկղերով, և բեռնել արկղերը բեռնատար: Ըստ պահանջի բեռնատար մեքենայով տեղափոխել բերքը համապատասխան վերամշակման կայան՝ առանց բերքի որակական ցուցանիշների անկման կամ քանակական տարբերության:

Կոլեկցիոն այգում բերքահավաքն իրականացնել մասնակի ըստ սորտերի պահանջի /տեսակավորված բերքահավաք/:

Նոյեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում կոլեկցիոն և ցուցադրական այգիները նախապատրաստել այգեթաղի աշխատանքներին: Վազերը անջատել լարերից: Ցուցադրական այգու հատվածից հավաքել կարկտապաշտպան ցանցերը:

1,8 հա մակերեսով ֆիլոքսերադիմացկուն սորտ պատվաստակալների մայրուտում պետք է իրականացվեն.

Մարտի առաջին տասնօրյակում վազերի բույների հողաշերտից ազատում:

Հաջորդիվ իրականացնել շարքերի լարերի տեղադրման և ձգման աշխատանքներ: Նշված աշխատանքներին զուգահեռ իրականացնել տվյալ հատվածում առկա բոլոր երկաթբետոնյա հենասյուների վիճակի մոնիտորինգ, որից հետո դրանց ամրացում, վնասված և ջարդված հենասյուների փոխարինում նորերով:

Բույնի ձևավորում, բեղիկների հեռացում և կապ. ապրիլից-օգոստոս ժամանակահատվածում իրականացնել վազերի բեղիկների հեռացում, շվատում, հիմնական շիվերի ուղղում, կանաչ կապ լարերին: Գործողություններն իրականացնել նշված ժամանակահատվածի ընթացքում՝ նվազագույնը 3 անգամ:

Պատվաստակալների բերքահավաք. Նոյեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում իրականացնել որպես պատվաստակալ հանդիսացող հիմնական շիվերի բերքահավաք: Աշխատանքների ավարտից հետո իրականացնել վազերի բույների հողաշերտով ծածկման աշխատանքներ:

Նորատունկ տնկարկում աշխատանքներ.

2020թ. աշնանը կոլեկցիոն այգու համալրված հատվածում /14 շարք/ իրականացնել ներկայացված աշխատանքները.

Մարտի առաջին տասնօրյակից՝ վազերի էտ, հենասյուների փոսերի փորում՝ 50-60 սմ խորությամբ տեխնիկայով և/կամ ձեռքով, հենասյուների տեղադրում, ամրացում, լարերի տեղադրում և ձգում: Այնուհետև իրականացնել վազերի չոր կապ: Մայիս ամսին կատարել պարարտացում անհրաժեշտ պարարտանյութերով /համաձայնեցնել Պատվիրատուի հետ/: Մայիս-օգոստոս ժամանակահատվածում կատարել կանաչ կապի և շվատման

աշխատանքներ՝ նշված ժամկետում նվազագույնը 2 անգամ: Նույն ժամանակահատվածում իրականացնել վազերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումներ ձեռքով և/կամ տեխնիկայով՝ նշված ժամկետում նվազագույնը 2 անգամ: Նոյեմբեր-դեկտեմբերին վազերը անջատել լարերից և նախապատրաստել ձմռան:

Ոռոգման աշխատանքներ. Ոռոգումը կազմակերպել ըստ վազերի պահանջի: Նախապատրաստել այգին ոռոգման համար: Ոռոգել վերը նշված բոլոր այգիները ապրիլից-նոյեմբեր ժամանակահատվածում նվազագույնը 7 անգամ: Յուրաքանչյուր անգամ ջրի ծախսը՝ հեկտարի հաշվարկով 1000մ3 /ջրի ծախսի վճարը իրականացվում է Կատարողի կողմից/: Բացի այդ ապահովել ջրվորի ներկայությունը, ով կապահովի ոռոգման ընթացքում ջրի ճիշտ հոսքը:

Կատարողը հուլիսի երկրորդ տասնօրյակից մինչև հոկտեմբերի առաջին կեսը պետք է մատուցի պահնորդական ծառայություններ նշված ամբողջ տարածքում: Հսկողությունը պետք է լինի շաբաթական 7 օր, օրեկան 24 ժամ ռեժիմով, որի նպատակով այգում պետք է ապահովվի շարժական վագոն-տնակի առկայությունը:

Վերը նկարագրված աշխատանքների կատարման ընթացքում գործիքները, լրացման համար անհրաժեշտ երկաթբետոնյա սյուները, մետաղյա լարերը և այլ բոլոր անհրաժեշտ օժանդակ պարագաները ձեռք են բերվում Կատարողի կողմից:

Նախքան մեկնարկը Պատվիրատուի հետ կազմել և համաձայնեցնել աշխատանքների հավանական ժամանակացույցը:

iii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 13.04.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 12.04.2021թ.-ի թիվ 16/2021 ծանուցման համաձայն՝ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի մարտի 15-ին կնքված Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կարիքների համար այգիների պահպանման ծառայությունների մատուցման թիվ «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/3» պետական գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է այգիների պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին

համապատասխան և սահմանված ժամկետներով: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 6 800 000 (վեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ և ըստ Պայմանագրով սահմանված վճարման ժամանակացույցով մարտ ամսվա համար պլանավորվող ծառայության մատուցման վճարը կազմում է 1 360 000 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը 03 ապրիլի 2021 թվականին Մասնակցի կողմից մատուցված ծառայությունների մասով, ներկայացրել է բացասական եզրակացություն և 03.04.2021 թվականին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել է այն ծառայությունների անվանումները, որոնք չեն մատուցվել կամ մատուցվել են թերություններով և համարվում են չկատարված:

Միաժամանակ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1 կետի 2.1.2 ենթակետի «ա» պարբերությամբ սահմանվել է անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ՝ 2 օրացուցային օր: Սակայն ոչ մի քայլ Մասնակցի կողմից չի ձեռնարկվել, և ի պատասխան այդ գրությանը՝ կրկին ներկայացվել է անհիմն պատճառաբանություններ և ծառայության մատուցման համար անընդունելի և ոչ իրավաչափ պայմաններ:

Վերոնշյալով պայամանավորված Կատարողը խախտել է նաև պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետը, սակայն՝ համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերը՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի ամբողջությամբ լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողի մատուցված ծառայությունները չեն համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին և խախտվել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը 09.04.2021 թվականին միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված ծառայությունների մատուցման գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումը

ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.04.2021թ.-ի թիվ 26/26-1/6050-2021 գրությամբ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից,

պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանա-տվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 և 1.2 կետերի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Այգիների պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների: Ծառայությունը մատուցվում է

պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով

առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 15.03.2021թ.-ին կնքված թիվ «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, բացի այլ բնութագրերից, սահմանվել է նաև, որ կոլլեկցիոն և ցուցադրական այգիներում 2021թ. մարտ ամսվա առաջին տասնօրյակում, պետք է իրականացվեն նշված տնկարկներում առկա խաղողի վազերի էտ՝ ազատ-հովհարային ձևավորմամբ:

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի մարտի 15-ին կնքված Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կարիքների համար այգիների պահպանման ծառայությունների մատուցման թիվ «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/3» պետական գնման պայմանագիրը լուծվել է, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը 03 ապրիլի 2021 թվականին Մասնակցի կողմից մատուցված ծառայությունների մասով, ներկայացրել է բացասական եզրակացություն և 03.04.2021 թվականին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել է այն ծառայությունների անվանումները, որոնք չեն մատուցվել կամ մատուցվել են

թերություններով և համարվում են չկատարված: Միաժամանակ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1 կետի 2.1.2 ենթակետի «ա» պարբերությամբ սահմանվել է անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ՝ 2 օրացուցային օր: Սակայն ոչ մի քայլ Մասնակցի կողմից չի ձեռնարկվել, և ի պատասխան այդ գրությանը՝ կրկին ներկայացվել է անհիմն պատճառաբանություններ և ծառայության մատուցման համար անընդունելի և ոչ իրավաչափ պայմաններ: Կատարողը խախտել է նաև պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետը, սակայն՝ համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերը՝ Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ լուծել է պայմանագիրը, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Կատարողի մատուցված ծառայությունները չեն համապատասխանել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին և խախտվել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները:

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը 09.04.2021 թվականին միակողմանի հրաժարվել Մասնակցի հետ կնքված ծառայությունների մատուցման գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 13.04.2021թ.-ին հրապարակելով Պայմանագրի միակողմանի լուծման մասին 12.04.2021թ.-ի թիվ 16/2021 ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ տվյալ դեպքում, «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսված ժամկետում ծառայությունը չէր կարող մատուցվել, քանի որ Պատվիրատուի և Մասնակցի միջև 2021թ.-ի մարտ ամսվա առաջին տասնօրյակում իրականացվելիք/մատուցվելիք ծառայության վերաբերյալ պայմանագիրը կնքվել է 15.03.2021թ.-ին՝ ավելի ուշ (մարտ ամսվա առաջին տասնօրյակը՝ 1-10) առաջին տասնօրյակի ավարտից հետո:

Այլ կերպ ասած՝ Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված այն դրույթը, որ ծառայությունը պետք է մատուցվի 2021թ.-ի մարտ ամսվա առաջին տասնօրյակում, իրենից ենթադրում է, որ կնքվելիք պայմանագրով պետք է նախատեսվի այնպիսի օբյեկտիվ ժամանակահատված, որը հնարավորություն կտա Մասնակցին իրացնել իր՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ և ժամանակին կատարումը, և ընդհակառակը, պայմանագրի կնքմամբ Մասնակիցը չպետք է զրկվի վերը նշված իր իրավունքների իրացման օբյեկտիվ հնարավորությունից:

Ըստ այդմ, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ 15.03.2021թ.-ին կնքված Պայմանագրով Պատվիրատուն չէր կարող Մասնակցից պահանջել կատարելու մի գործողություն, ծառայության մատուցում, որի կատարման ժամկետը, Պայմանագրի կնքման պահին, օբյեկտիվորեն եղել է սպառված:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, ուսումնասիրելով կողմերի միջև 15.03.2021թ.-ին կնքված թիվ «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով պետական գնման պայմանագիրն ու այդ պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից ծառայությունների ոչ պատշաճ կատարման հանգամանքը պայմանավորված է այդ ծառայությունների պատշաճ կատարման համար սահմանված ժամկետի Պատվիրատուի կողմից թույլ տրված խախտմամբ. Պատվիրատուն գիտակցելով մատուցվելիք ծառայությունների մարտ ամսվա սկզբից իրականացնելու մասին, քայլեր չի ձեռնարկել գնման գործընթացը կազմակերպել այնպես, որ հայտերի գնահատումը, անգործությունը և պայմանագրի կնքումը հնարավոր լինի իրականացնել մինչև 2021թ.-ի մարտ ամիսը, դրանով իսկ նպաստելով Մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների հնարավոր ոչ պատշաճ կատարմանը:

Ավելին՝ ելնելով Պատվիրատուի դրսևորած վերը նշված գործողություններից (անգործությունից այդ թվում) և սույն որոշմամբ բերված փաստական հանգամանքներից՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ տեխնիկական բնութագրում սահմանված ժամկետը օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք չէ այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվել է տվյալ գնումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ

մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոնշյալներով իրավական և փաստական հանգամանքերի հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի կամ կնքված պայմանագրի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը կամ պայմանագրի միակողմանիորեն լուծմանը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման ընթացակարգով կամ պայմանագրով նախատեսված և ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից մասնակցի կողմից ներկայացված հայտը մերժելուն կամ պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.04.2021թ.-ի թիվ 26/26-1/6050-2021 գրությամբ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/107 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**